Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 02-06-2025 թ. որոշմամբ
«ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂԱՄԱՍ Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ 1
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01133
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2009-09-15
1.5 ՀՎՀՀ-ն		01845834
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94204017
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.cdf.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@cdf.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Լուսինե Սիմոնյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	13	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Աջակցել ՀՀ Վայոց ձորի մարզի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանը համընդհանուր կրթության համակարգ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի մասնագետների կողմից	78,395,200

	Աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին ընտանիքում ապրելու, զարգանալու, կրթություն ստանալու և հասակակիցների շրջանում լիարժեք ներառվելու համար սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների տրամադրմամբ	30,465,151
	Ծրագիրը նպատակ բարելավել Ջերմուկ համայնքում ապրող երեխաների կյանքի որակը մատուցելով մասնագիտական ծառայություններ, զորեղացնելով ընտանիքները և ամրապնդելով միջգերատեսչական համագործակցությունը	2,100,000
	Ծրագիրը նպատակ բարելավել Ջրվեժ համայնքում ապրող երեխաների կյանքի որակը մատուցելով մասնագիտական ծառայություններ, զորեղացնելով ընտանիքները և ամրապնդելով միջգերատեսչական համագործակցությունը	1,850,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում հաշմանդամություն ունեցող երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին հոգեկան առողջության, ճկունության և սոցիալական ինտեգրման զարգացման համար Այն հասանելի է դարձնում մասնագիտացված ծառայություններն ու բարելավում համայնքային կյանքում մասնակցությունը	16,534,690
	Աջակցել Հայաստանում համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրման ռեֆորմին	16,707,436
	Աջակցություն մասնագիտական ծառայությունների մատուցմանը անվճարունակ ընտանիքների սոցիալ հոգեբանական, լոգոպեդական և այլ մանսագիտական ծառայությունների կարիքներ ունեցող երեխաներին	3,184,000
	Ապահովել Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների համար համապարփակ սոցիալական աջակցությունը և հյուրընկալ համայնքներում ինտեգրումը	14,976,213
	Ծրագրի նպատակն է համակողմանի սոցիալհոգեբանական աջակցություն ցուցաբերել տեղահանված երեխաներին և նրանց ընտանիքներին Երևանում ինչպես նաևԱրարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում	130,625,071

	Աջակցել Արցախից տեղահանված բնակչությանը սոցիալ հոգեբանական ծառայությունների միջոցով, ինչպես նաև բարդձրացնել ընդանիքների տնտեսական դիմակայունությունն ու պատրաստվածությունը տարբեր ճգնաժամերի համար	6,104,592
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Աջակցություն մասնագիտական ծառայությունների մատուցմանը անվճարունակ ընտանիքների սոցիալ հոգեբանական, լոգոպեդական և այլ մանսագիտական ծառայությունների կարիքներ ունեցող երեխաներին	21,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Աջակցել ՀՀ Վայոց ձորի մարզի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանը համընդհանուր կրթության համակարգ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի մասնագետների կողմից	78,395,200	
Աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին, ընտանիքում ապրելու, զարգանալու, կրթություն ստանալու և հասակակիցների շրջանում լիարժեք ներառվելու համար սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների տրամադրմամբ	30,465,151	
Ծրագիրը նպատակ բարելավել Ջերմուկ համայնքում ապրող երեխաների կյանքի որակը մատուցելով մասնագիտական ծառայություններ, զորեղացնելով ընտանիքները և ամրապնդելով միջգերատեսչական համագործակցությունը	2,100,000	

SIMONYAN LUSINE 7802750164 Digitally signed by SIMONYAN LUSINE 7802750164 Date: 2025.06.30 14:33:13 AMT

Ծրագիրը նպատակ բարելավել Ջրվեժ համայնքում ապրող երեխաների կյանքի որակը մատուցելով մասնագիտական ծառայություններ, զորեղացնելով ընտանիքները և ամրապնդելով միջգերատեսչական համագործակցությունը	1,850,000
Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում հաշմանդամություն ունեցող երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին՝ հոգեկան առողջության, ճկունության և սոցիալական ինտեգրման զարգացման համար: Այն հասանելի է դարձնում մասնագիտացված ծառայություններն ու բարելավում համայնքային կյանքում մասնակցությունը	19,491,188
Աջակցել Հայաստանում համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրման ռեֆորմին	17,486,372
Աջակցություն մասնագիտական ծառայությունների մատուցմանը անվճարունակ ընտանիքների սոցիալ հոգեբանական, լոգոպեդական և այլ մանսագիտական ծառայությունների կարիքներ ունեցող երեխաներին	3,205,000
Ապահովել Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների համար համապարփակ սոցիալական աջակցությունը և հյուրընկալ համայնքներում ինտեգրումը	14,106,406
Ծրագրի նպատակն է համակողմանի սոցիալհոգեբանական աջակցություն ցուցաբերել տեղահանված երեխաներին և նրանց ընտանիքներին Երևանում ինչպես նաևԱրարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում	117,132,024
Աջակցել Արցախից տեղահանված բնակչությանը սոցիալ հոգեբանական ծառայությունների միջոցով, ինչպես նաև բարդձրացնել ընդանիքների տնտեսական դիմակայունությունն ու պատրաստվածությունը տարբեր ճգնաժամերի համար	6,104,592
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	291,014,733
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	290,335,933

Նշումներ՝

Ձեռնարկատիրական գործունեության և այլ մուտքերը կազմել են 678 800 ՀՀ դրամ, որոնք օգտագործվել են կանոնադրական նպատակների համար:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___33___ էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մանկական Զարգացման» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մանկական Զարգացման» Հիմնադրամի (Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի»* (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող մասնակգիտական էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում

անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել

համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Առաջադրանքի պատասխանատու
Լիլիթ Կատոյան

26 հունիսի 2025թ
ք. Երևան

«Մանկական Զարգացման» Հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	41,159	27,540
Հետաձգված հարկային ակտիվներ		18	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**41,177**	**27,540**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	6,404	6,779
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	14,852	4,791
Փոխատվություններ		-	300
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	63,344	37,375
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**84,600**	**49,245**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**125,777**	**76,785**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		72,863	50,433
Ընդամենը զուտ ակտիվներ		**72,863**	**50,433**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ		-	50
Վարձակալության գծով պարտավորություն	9	7,168	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	7,614	3,920
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**14,782**	**3,970**
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ		1,248	-
Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ	11	5,311	4,596
Վարձակալության գծով պարտավորություն	9	3,618	-
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	27,955	17,786
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**38,132**	**22,382**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**125,777**	**76,785**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 26-ին:

Տնօրեն

Հաշվապահական ծառայություններ մատուցող Ընկերության ներկայացուցիչ

Լուսինե Սիմոնյան

Աղվան Գևորգյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար դրամ	Ծնթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	12	61,006	74,801
Վաճառքի ինքնարժեք	13	(41,197)	(47,803)
Համախառն շահույթ		**19,809**	**26,998**
Շնորհներից և նվիրաբերություններից եկամուտներ	14	291,386	261,808
Գործառնական այլ եկամուտ		-	1,022
Նվիրատվությունից ծախսեր	15	(20,461)	(34,359)
Ծրագրային ծախսեր	16	(229,006)	(208,219)
Իրացման ծախսեր		(375)	(85)
Վարչական ծախսեր	17	(37,205)	(42,252)
Գործառնական ծախսեր	18	(1,435)	(1,748)
Գործառնական շահույթ		**22,713**	**3,165**
Վարձակալության գծով տոկոսային ծախս		(262)	-
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ / (վնաս)	19	(39)	3
Շահույթ մինչև հարկումը		**22,412**	**3,168**
Շահութահարկի փոխհատուցում		18	-
Տարվա շահույթ		**22,430**	**3,168**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**22,430**	**3,168**

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Մանկական Զարգացման» Հիմնադրամ
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**47,265**	**47,265**
Տարվա շահույթ	3,168	3,168
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	3,168	3,168
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50,433**	**50,433**
Տարվա շահույթ	22,430	22,430
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	22,430	22,430
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**72,863**	**72,863**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից մուտքեր	58,950	74,401
Ստացված շնորհներ և նվիրաբերություններ	305,132	256,010
Այլ մուտքեր	-	111
Ստացված շնորհների ետ վերադարձ	-	(827)
Վճարումներ մատակարարներին	(101,678)	(109,390)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(226,116)	(198,485)
Տրված նվիրատվություններ	-	(340)
Վարձակալական վճարներ	(120)	(324)
Վարձակալության գծով տոկոսային ծախսի վճարում	(262)	-
Վճարումներ բյուջե	(3,257)	(3,986)
Այլ գործառնական ելքեր	(381)	(792)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**32,268**	**16,378**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերման համար վճարումներ	(6,982)	(4,094)
Փոխառության տրամադրում	-	(800)
Փոխառության մարում	300	500
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(6,682)**	**(4,394)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորության հիմնական մասի վճարումներ	(764)	-
Փոխառությունների ստացում	3,743	1,298
Փոխառությունների մարում	(2,545)	(1,248)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**434**	**50**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	**26,020**	**12,034**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37,375	25,337
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(51)	4
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**63,344**	**37,375**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Մանկական զարգացման» Հիմնադրամը (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 15 սեպտեմբերի 2009թ.: Հիմնադրամի գործող կանոնադրությունը գրանցվել է 15 սեպտեմբերի 2009թ. ՀՀ պետական ռեգիստրի իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման Կենտրոնական մարմնի կողմից (գրանցման համար՝ 222.160.01133, վկայական 03Ա085222):

Հիմադրամի նպատակն է՝

- Նպաստել երեխաների իրավունքների պաշտպանությանը (այդ թվում՝ կրթական, իրավական, առողջապահական,սոցիալական,մշակութային, հոգևոր և այլ),
- Նպաստել ներառական կրթության համակարգի կայացմանը Հայաստանում,
- Կանխարգելել երեխաների լքումը՝ նպաստելով դեինստիտուցիոնալացմանը և երեխաների վերադարձին ընտանիք,
- Առաջարկել մասնագիտական ծառայություններ՝աջակցելով խոցելի խմբի երեխաներին և նրանց ընտանիքներին,
- Նպաստել հանրային իրազեկման բարձրացմանը խոցելի խմբի երեխաների խնդիրների շուրջ,
- Նպաստել երեխաների մասնակցությանն իրենց վերաբերող որոշումների ընդունման գործընթացին՝համաձայն Երեխայի իրավունքների մասին միջազգային կոնվենցիայի պահանջներին,
- Նպաստել համայնքներում աղքատության հաղթահարմանն՝ առանցքային ուշադրություն դարձնելով երեխաների խնդիրներին,
- Նպաստել երեխաների ազատ ժամանցի համար հնարավորությունների ստեղծմանը և նրանց առանձնահատուկ ունակությունների զանգացմանը՝ մշակելով և արտադրելով զարգացնող խաղեր,
- Նպաստել մեթոդոլոգիական բազայի հարստացմանը՝ մշակելով համապատասխան մեթոդոլոգիական նյութեր ինչպես երեխաների հետ աշխատող մասնագետների, մանկավարժների, այնպես էլ ծնողների համար, ինչպես նաև ձեռնարկներ և գրքեր նախատեսված երեխաների համար:

«Զարման» ՍՊ Ընկերության (այսուհետ՝ Դուստր ընկերություն) գործող կանոնադրությունը գրանցվել է 16 փետրվարի 2016թ.-ին ՀՀ պետական ռեգիստրի իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման Կենտրոնական մարմնի կողմից (գրանցման համար՝ 290.110.888955, վկայական 03Ա1038955): Դուստր ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10,000 (տասը հազար ՀՀ դրամ), որը բաժանված է 100 բաժնեմասի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ: Դուստր ընկերության բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, և պատկանում են միակ մասնակից Մանկական Զարգացման Հիմնադրամին: Դուստր ընկերության գործունեության հիմնական նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու միջոցով շահույթի ստացումը, որն ուղղվում է Հիմնադրամի նպատակների իրականացմանը:

Հիմնադրամի և նրա դուստր ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1:

Խմբի աշխատակիցների ցուցակային թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 20 աշխատակից (2023 թվականի վերջին՝ 19 աշխատակից):

2. Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:
Բացի այդ, շարունակական ռազմական հակամարտությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև, որոնց ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում: Հայաստանի և Ադրբեջանի միջև իրավիճակը շարունակում է լարված մնալ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանի սահմանազատման շուրջ շարունակվող տարաձայնությունների պատճառով:
Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ այս հանգամանքների ամբողջական ազդեցությունը Հիմնադրամի վրա գնահատել հնարավոր չէ և վերոնշյալ հանգամանքների ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա կարող է բացասական անդրադառնալ նաև Հիմնադրամի գործունեության վրա: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

3. Պատրաստման հիմունքներ

3.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

3.2 Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Խմբի կողմից ընդունված չափման հիմունք է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Խումբը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

3.4 Անընդհատություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

3.5 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

3.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ առկա ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» - Փոխարկելիության բացակայությունը

ՀՀՄՍ 21-ում կատարված այս լրացմամբ հստակեցվում է որ արժույթը համարվում է փոխարկելի, երբ կազմակերպությունն ի վիճակի է փոխարկել տվյալ արժույթը այլ արժույթի հետ շուկաներում կամ այլ փոխարկման մեխանիզմով, որն առաջացնում է իրավաբանորեն ամրագրված իրավունքներ և պարտականություններ՝ առանց անհարկի ուշացումների, և կարող է փոխարկել նշանակալի չափով գումարներ:

Երբ արժույթը փոխարկելի չէ, կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը որպես փոխարժեք, որը կիրառելի կլիներ շուկայի մասնակիցների միջև սովորական փոխանակման գործարքում, և որը ճշմարտորեն արտացոլում է տնտեսական պայմանները: Պահանջվում են նաև համապատասխան բացահայտումներ:

ՀՀՄՍ 21-ի այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2025թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» - Բացահայտումներ

ՖՀՄՍ 7-ում կատարված խմբագրումը պահանջում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին:

Նաև պահանջվում է առանձին բացահայտել ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև պարտադիր այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պայմանագրային այն պայմանները, որոնց պատճառով կարող են փոփոխվել

պայմանագրային հոսքերի գումարները և ժամկետները, և որոնք հանդիսանում են պայմանական դեպքեր և ուղղակի կապված չեն բազային պարտքային համաձայնագրի ռիսկի և արժեքի փոփոխության հետ։

ՖՀՄՍ 7-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» - Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի

Համաձայն կատարված խմբագրման ՀՀՄՍ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել։

Նաև թույլատրվում է էլեկտրակայանին նման պայմանագրերը դասակարգել որպես հեջավորման գործիք, եթե հեջավորված հոդվածը ածանցյալ պայմանագրին համահունչ պայմաններով սպասվող իրացումն է։

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» - Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը

ՖՀՄՍ 9-ում կատարված խմբագրմամբ պարզաբանվում է որ առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչման պահին պետք է չափվեն այն արժեքով, որը որոշվել է կիրառելով ՖՀՄՍ 15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» հաշվապահական ստանդարտը։

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում

ՖՀՄՍ 9-ում կատարված լրացմամբ հստակեցում է որ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ։

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը»

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 18 հաշվապահական ստանդարտը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը և փոխարինում է «ֆինասական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ին։

Նշանակալի փոփոխության է ենթարկվել շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներակայացման ենթակա տեղեկատվության բովանդակությունը, որտեղ պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների։

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 19 «Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերություններ. բացահայտումներ»

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 19 հաշվապահական ստանդարտը, որը հնարավորություն է տալիս հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպությունների, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների

համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:

ՖՀՄՍ 19-ի կիրառումը պարտադիր չէ և նշված պայմաններին բավարարող կազմակերպությունը կարող է այն կիրառել մեկ հաշվետու ժամանակաշրջանում և հրաժարվել դրա կիրառումից մեկ այլ ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 19-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

4.1 Համախմբման հիմքերը

Դուստր են հանդիսանում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Համախմբման արդյունքում չներառված գործարքներ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները:

4.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում առաջընթաց:
Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Կառուցվածքներ	-	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	-	1-8 տարի
Արտադրական, տնտեսական գույք	-	1-5 տարի
Այլ հիմնական միջոցներ	-	1-8 տարի

4.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

4.4 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Ձեռք բերման ծախսումներն են գնման գինը, ներմուծման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Խմբի ետ վերադարձման, մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձանց վճարվող գումարները, ինչպես նաև այդ պաշարների ձեռք բերման հետ կապված տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները:

Ձեռք բերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները հանվում են:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով: Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է միջին կշռված արժեքի բանաձևով:

4.5 Վարձակալություն

Խումբը որպես վարձակալ վարձակալության պայմանագրի սկզբնական ճանաչման պահին ճանաչում է ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալական պարտավորություն, բացառությամբ ցածրարժեք և կարճաժամկետ վարձակալությունների՝ ՖՀՄՍ 16-ով նախատեսված բացառությունների:

Սկզբնական ճանաչումը

Սկզբնական ճանաչման ամսաթվին Խումբը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբնական արժեքով, որը ներառում է հետևյալ տարրերը.

- վարձակալական պարտավորության սկզբնական ճանաչման արժեքը,

- ճանաչման ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալական վճարները, հանած վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանների ազդեցությունը,
- կրած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալած ակտիվի ազատման, վերականգման կամ ապամոնտաժման ծախսերի գնահատականը:

Սկզբնական ճանաչման ամսաթվին Խումբը չափում է վարձակալական պարտավորությունը՝ որպես այդ ամսաթվի դրությամբ վճարման ենթակա վարձակալական վճարների ներկա արժեք: Վարձակալական վճարները զեղչվում են վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, եթե այն հնարավոր է որոշել: Հակառակ դեպքում Խումբը զեղչման համար օգտագործում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբանական արժեքով՝

- հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը

- ճշգրտված վարձակալական պարտավորության վերաչափումով:

Ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության հաշվարկի համար հիմք է հանդիսանում հիմնական միջոցների մաշվածության Խմբի քաղաքականությունը: Սկզբնական ճանաչումից հետո Խումբը վերաչափում է վարձակալական պարտավորությունը՝

- մեծացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալական պարտավորության նկատմամբ հաշվեգրվող տոկոսը

- փոքրացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարած վարձակալական վճարները

- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության պայմանագրի վերաչափումները կամ փոփոխությունները

4.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբը չունի որպես այլ համապարփակ արդյունքում իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում, արտացոլված են ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Խումբը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Խումբը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ն առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Խմբի պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Խումբը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Խումբը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Քանի որ ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական պարտավորությունների հաշվառումը հիմնականում մնում է այնպիսին, ինչպիսին էր ՀՀՄՍ 39-ի պահանջներով, ՖՀՄՍ 9-ի կիրառումը ազդեցություն չի ունեցել Խմբի ֆինանսական պարտավորությունների վրա: Այնուամենայնիվ, ամբողջականության համար, ստորև ներկայացված է համապատասխան քաղաքականությունը:

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.8 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Արտարժույթ	*31.12.2024թ*	*31.12.2023թ*
1 Եվրո	413.89 դրամ	447.9 դրամ
1 Ռուսական ռուբլի	3.71 դրամ	4.5 դրամ
1 ԱՄՆ դոլար	396.56 դրամ	404.79 դրամ

4.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:
Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի բիզնեսի միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:
Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.11 Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցել է ծառայություն, Խումբը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, ՀՀՄՍ 2 «Պաշարներ» և ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտները):

Խումբը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ. և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

4.12 Շնորհներ և նվիրաբերություններ

Խմբի կողմից շնորհների հաշվառումը իրականացվում է ՀՀՄՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտի համաձայն:

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները (ծրագրային, վարչական և այլն), որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Խմբին տրված նվիրաբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում որպես եկամուտ այն տարում, երբ դրանք փաստացի ստացվել են:

4.13 Հասույթ գնորդների հետ կնքված պայմանագրերից

Այս ստանդարտը առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ.-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին:

ՖՀՄՍ 15. «Հասույթ գնորդների հետ կնքված պայմանագրերից» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Խումբը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Խումբը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքվեն Խմբի կողմից:

Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. նույնացնել գնորդի հետ պայմանագիրը,

Քայլ 2. նույնացնել կատարման ենթակա պարտավորությունները,

Քայլ 3. նույնացնել գործարքի գինը,

Քայլ 4. բաշխել գործարքի գինը կատարման ենթակա պարտավորություններին,

Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ խումբը կատարում է կատարողական պարտավորությունները:

5 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Վարձակալված տարածքի կապիտալացում	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական գույք, տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**	**19,078**	**18,824**	**5,479**	**1,728**	**2,647**	**47,756**
Ավելացում	-	-	-	1,153	66	2,875	**4,094**
Վերադասակարգում	-	5,005	(5,005)	-	-	-	**-**
Դուրսգրում	-	-	(13,819)	-	-	-	**(13,819)**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**24,083**	**-**	**6,632**	**1,794**	**5,522**	**38,031**
Ավելացում	11,664	170	-	5,748	5,511	317	**23,410**
Դուրսգրում	-	-	-	-	-	-	**-**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,664**	**24,253**	**-**	**12,380**	**7,305**	**5,839**	**61,441**
Կուտակված մաշվածություն							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**	**318**	**314**	**3,234**	**1,678**	**2,374**	**7,918**
Տարվա ծախս	-	1,288	521	1,193	94	312	**3,408**
Դուրսգրում	-	-	(835)	-	-	-	**(835)**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**1,606**	**-**	**4,427**	**1,772**	**2,686**	**10,491**
Տարվա ծախս	979	1,375	-	2,144	4,781	512	**9,791**
Դուրսգրում	-	-	-	-	-	-	**-**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**979**	**2,981**	**-**	**6,571**	**6,553**	**3,198**	**20,282**
Հաշվեկշռային արժեք							
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**22,477**	**-**	**2,205**	**22**	**2,836**	**27,540**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,685**	**21,272**	**-**	**5,809**	**752**	**2,641**	**41,159**

Օգտագործման իրավունքով ակտիվը իրենից ներկայացնում է վարձակալած տարածք, որտեղ Հիմնադրամը իրականացնում է իր գործունեությունը**:**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբում առկա են 13,048 հազար ՀՀ դրամի զրո հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,126 հազար ՀՀ դրամ):

6 Պաշարներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	62	830
Ապրանքներ	6,342	5,949
Ընդամենը	**6,404**	**6,779**

Շարունակվող գործունեության գծով 2024 թվականի ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների ինքնարժեքը կազմում է 33,272 հազար դրամ (2023 թվականի ընթացքում՝ 46,110 հազար դրամ): Խմբում գրավադրված պաշարներ առկա չեն:

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,908	1,853
Տրված կանխավճարներ	11,234	451
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	424	2,283
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով	96	66
Դեբիտորական պարտքեր ամենամյա արձակուրդի գծով	190	138
Ընդամենը	**14,852**	**4,791**

Ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքերի միջին տևողությունը կազմում է 17 օր (2023թ.՝ 9 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	5,520	1,472
Ընթացիկ հաշիվներ բանկում	57,824	35,903
Ընդամենը	**63,344**	**37,375**

9 Վարձակալություն

Հաշվետու տարվա վերջում Խումբը չունի վարձակալած փոքրարժեք ակտիվներ: Հաշվետու տարվա վերջում Խումբը չունի կարճաժամկետ վարձակալության պայմանագրեր:
Խումբը հաշվետու տարվա ընթացքում վարձակալել է տարածք, որտեղ իրականցնում է իր գործունեությունը: Վարձակալությամբ ձեռք բերված տարածքի գծով օգտագործման իրավունքը բացահայտված է ծանոթագրություն 5-ում:

Խումբը ակտիվի օգտագործման իրավունքի չափման համար կիրառում է ՀՀՄՍ 16-ով նախատեսված ինքնարժեքի մոդելը:

Վարձակալության ոչ չեղարկելի ժամկետը 3 տարի է: Վարձակալության պայմանագիրը չի նախատեսում երկարացման ինչպես նաև պայմանագիրը չեղարկելու օպցիոններ, որոնք Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի:

Երկարաժամկետ վարձակալության գծով ամսական վարձավճարը կազմում է 370 հազար ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

Ժամկետի վերլուծություն՝ պայմանագրային չզեղչված դրամական հոսքեր

Հազար դրամ	2024թ.	2023թ.
մինչև 1 տարի	4,454	-
1-ից երեք տարի	7,770	-
ավելին, քան 3 տարի	-	-
Ընդամենը	**12,224**	**-**

10 Շնորհներ և նվիրաբերություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներին վերաբերող շնորհներ		
Տարեսկզբի մնացորդ	**3,920**	**2,047**
Տարվա ընթացքում ստացված	11,746	3,243
Ֆինանսական արդյունքներում արտացոլված	(8,052)	(1,370)
Տարեվերջի մնացորդ	**7,614**	**3,920**
Եկամուտներին վերաբերող շնորհներ և նվիրաբերություններ		
Տարեսկզբի մնացորդ	**17,786**	**26,284**
Տարվա ընթացքում ստացված	305,249	256,010
Դրամաշնորհի ետ վերադարձ	-	(827)
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներ	(11,746)	(3,243)
Ֆինանսական արդյունքներում արտացոլված	(283,334)	(260,438)
Տարեվերջի մնացորդ	**27,955**	**17,786**
Ընդամենը	**35,569**	**21,706**

11 Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,234	873
Պարտավորություններ պետական բյուջեին	1,179	-
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	1,811	3,636
Այլ կրեդիտորական պարտավորություններ	87	87
Ընդամենը	**5,311**	**4,596**

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 20 օր (2023թ.՝ 7 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

12 Հասույթ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների իրացումից	7,113	19,225
Ծառայությունների մատուցումից	53,893	55,576
Ընդամենը	**61,006**	**74,801**

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը խմբավորված է հետևյալ կերպ.

Հազար դրամ	Ապրանքների իրացումից	Ծառայությունների մատուցումից	Ընդամենը
2024թ.	Հայաստան	Հայաստան	
Սեգմենտի հասույթ՝ ընդհանուր	7,113	53,893	61,006
Միջսեգմենտային վաճառքներից հասույթ	-	-	-
Սեգմենտի հասույթ՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	7,113	53,893	61,006
Հասույթի ճանաչման ժամանակացույց			
- Ժամանակի կոնկրետ պահին	7,113	53,893	61,006
- Ժամանակի ընթացքում	-	-	-
	7,113	**53,893**	**61,006**

Հազար դրամ	Ապրանքների իրացումից	Ծառայությունների մատուցումից	Ընդամենը
2023թ.	Հայաստան	Հայաստան	
Սեգմենտի հասույթ՝ ընդհանուր	15,920	58,881	74,801
Միջսեգմենտային վաճառքներից հասույթ	-	-	-
Սեգմենտի հասույթ՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	15,920	58,881	74,801
Հասույթի ճանաչման ժամանակացույց			
- Ժամանակի կոնկրետ պահին	15,920	58,881	74,801
- Ժամանակի ընթացքում	-	-	-
	15,920	**58,881**	**74,801**

13 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված ապրանքների ինքնարժեք	3,982	10,746
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	37,215	37,057
Ընդամենը	**41,197**	**47,803**

14 Շնորհներից և նվիրաբերություններից եկամուտներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող	8,053	1,370
Եկամուտներին վերաբերող	283,333	260,438
Ընդամենը	**291,386**	**261,808**

15 Նվիրատվությունից ծախսեր

Նվիրատվությունների գծով ծախսերը իրենցից ներկայացնում են՝

- CLASS – «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրով աջակցությունները տրամադրվել են տնտեսական բաղադրիչի շրջանակում, ըստ որի նախապես գնահատվել են խոցելի ընտանիքների անդամների՝ որևէ մասնագիտություն սովորելու ներուժը, այնուհետ ընդգրկել դասընթացներում, իսկ ավարտից հետո տրամադրվել են համապատասխան մասնագիտության գործիքների փաթեթ՝ շահառուների զբաղվածությունն ապահովելու նպատակով:
- GIZ- «Համապարփակ սոցիալ-հոգեբանական աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների, երիտասարդներին և իրենց ընտանիքներին» ծրագրով աջակցությունները տրամադրվել են հաշմանդամություն ունեցող, դժվար իրավիճակում հայտնված երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին՝ հոգեկան առողջության, ճկունության և սոցիալական ինտեգրման զարգացման համար: Այն հասանելի է դարձրել մասնագիտացված ծառայությունները, օգնել է լուծելու բազմաթիվ սոցիալական, հոգեբանական, ինտեգրման հարցեր ու բարելավել է համայնքային կյանքում վերը նշված շահառուների մասնակցությունը:
- UNICEF - «Ապահով տարածքների և համայնքահեն մեխանիզմների միջոցով տեղահանված երեխաների և նրանց խնամակալների սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում» ծրագրով աջակցությունները տրամադրվել են ծրագրի շահառու առավել քան 175 Արցախից տեղահանված երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ուղղվել են սոցիալական ոլորտի աշխատակիցների կարողությունների զարգացմանը՝ բնակչության կարիքներին արդյունավետ արձագանքելու, երեխայազգայուն հաղորդակցության և հոգեբանական առաջին օգնության վրա կենտրոնանալու համար:

16 Ծրագրային ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անձնակազմի վարձատրություն	166,930	132,380
Տրանսպորտային ծախսեր	16,904	17,911
Հոգեբանի և լոգոպեդի ծառայություն	7,693	-
Դասընթացների և սեմինարների գծով ծախսեր	2,042	12,301
Ընթացակարգերի, մոդուլների մշակում	-	1,916
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	5,141	5,006
Վարձակալական վճարներ	120	500
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	5,002	5,054
Տնտեսական, նյութական ծախսեր	3,115	5,528
Շինարարական ծախսեր	450	6,083
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,484	1,635
Մաշվածություն և ամորտիզացիա	7,824	1,094
Սցենարների մշակման ծառայություն	-	4,500
Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	917	757
Կոնֆերանսների և միջոցառումների անցկացում	1,116	137
Կենտրոնի երեխաների գծով ծախսեր	243	3,480
Ուսումնասիրություն	1,000	2,090
Սոցիալական ծառայությունների մատուցում	3,049	4,819
Փոխհատուցման ենթակա ծախսեր	5,200	-
Այլ ծախսեր	776	3,028
Ընդամենը	**229,006**	**208,219**

17 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անձնակազմի վարձատրություն	23,922	26,788
Գրասենյակային, կոմունալ և տնտեսական ծախսեր	5,195	3,416
Հիմնական միջոցների մաշվածություն	1,251	1,958
Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	717	486
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	950	850
Տպագրական ծախսեր	-	1,716
Չփոխհատուցվող հարկեր	3,172	3,687
Այլ ծախսեր	1,998	3,351
Ընդամենը	**37,205**	**42,252**

18 Գործառնական այլ ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անհուսալի դեբիտորական պարտքերի պահուստ	959	-
Պաշարների դուրս գրում	95	608
Արտարժույթի փոխարկման ծախսեր	381	792
Գործառնական այլ ծախսեր	-	348
Ընդամենը	**1,435**	**1,748**

19 Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ / (վնաս)

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխարժեքային տարբերություններից օգուտ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	65	671
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	47	12
	120	**683**
Փոխարժեքային տարբերություններից վնաս		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(116)	(667)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(8)	(8)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(35)	(5)
	(159)	**(680)**
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ / (վնաս)	**(39)**	**3**

20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն

էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

21 Ֆինանսական գործիքներ

21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 4.7-ում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
Փոխատվություններ	-	300
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,908	1,853
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	57,824	35,903
Ընդամենը	**60,732**	**38,056**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Փոխառություններ	1,248	50
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,234	873
Ընդամենը	**3,482**	**923**

22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:
Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

- ✓ ***Արտարժութային ռիսկ***

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:
Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ ստացված դրամաշնորհներից և ստացված ծառայություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով:
Հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբն արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներ ու պարտավորություններ չունի: Խմբի նախորդ տարվա արտարժութային ռիսկը ներկայացված է ստորև.

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Հազար դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ բանկերում	-	-
	-	**-**
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	43	17
	43	**17**
Զուտ արդյունք	**(43)**	**(17)**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Հազար դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ բանկերում	-	-
	-	**-**
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	43	17
	43	**17**
Զուտ արդյունք	**(43)**	**(17)**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):
Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2024թ.	2023թ.
Համապարփակ ֆինանսական արդյունք	(2)	(2)

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Խումբը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Խմբի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Խումբը գրավ չի վերցնում: Բացի այդ Խումբը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Փոխատվություններ	-	300
Դեբիտորական պարտքեր	2,908	3,419
Մնացորդներ բանկերում	57,824	35,903
Ընդամենը	**60,732**	**39,622**

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:
Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:
Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

23 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)

24 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են՝ հիմնադիրները, հոգաբարձուների խորհրդի անդամները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:
Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ:
Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

ա) Հիմնադիրների հետ կատարված գործարքների մանրամասներ

Հազար դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2024	**2023**	**2024**	**2023**
Ստացված շնորհ և նվիրաբերություն	6,105	29,428	-	252
Փոխհատուցման ենթակա կոմունալ ծախսեր	(6,422)	(364)	(836)	(364)

բ) Ղեկավար անձնակազմի հետ կատարված գործարքների մանրամասներ

Հազար դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2024	**2023**	**2024**	**2023**
Ստացված փոխառություն	50	(50)	-	(50)
Գործուղում	154	40	-	-
Աշխատանքի վարձատրություն	(10,415)	(8,175)	18	18
Չօգտագործված արձակուրդի պահուստ	(2,505)	(3,315)	(984)	(1,153)

գ)Դուստր ընկերության հետ կատարված գործարքների մանրամասներ.

Հազար ՀՀ դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2024	**2023**	**2024**	**2023**
Տրված փոխառություն	-	-	3,500	3,500
Ստացված ծառայություններ և ապրանքներ	(4,193)	(3,305)	-	(1,566)

25 Պայմանականություններ

25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը

համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել: Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

25.4 Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Խմբի չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

25.5 Պայմանական պարտավորություններ

Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

26 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 14:31